

«ԵՍ ԱՍԱՑԻ, ՈՐ ԴՈՒՔ ԿՀԱՂԹԵՔ»

ԽՈՍՔ ՀՐԱԺԵՇՏԻ

«Ինչ լավ է, որ հայերս քրիստոնյա ենք»:
ՎԱԶԳԵՆ Ա

Աստված ողորմած եղավ մեր ժողովրդի հանդեպ. 1955 թվականին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու 130-րդ Հայրապետն ընտրվեց և օծվեց Վազգեն Առաջինը, և Տերը լուսավորեց ընտրյալի ճամփան մինչև վախճանը Սուրբ Գահի վրա:

Անչափ դժվար է գրել արդեն իր կենդանության օրոք երևացող, ազգային Մեծ հոգևոր և աշխարհիկ գործչի մասին, անցյալ կատարյալով, երբ աչքերիդ առջև դեռ նա կենդանի է, շնչում է, քայլում, խոսում. ավաղ դառն է իրականությունը:

Երեսունինը տարի Մեր Լուսահոգին գահակալը եղավ հայոց հավատի Սուրբ Աթոռին: 2001 թվականին նշվելու է 1700-ամյակը պետականորեն քրիստոնյա հայ ժողովրդի, այդ թվականի կողքին, 39 տարին կաթիլ էլ չէ, բայց Հայրապետների շարքում շատ քչերին է դախտ վիճակվել 39 տարի անընդմեջ կրել Հայոց հավատի առաջին խաչն ու գավազանը:

Եվ երբ այսօր արդեն մեզ հետ չէ մեր սիրելի Հայրապետը, մեր առջև ավելի հստակ ու լուսավոր կանգնում է նրա ազնիվ, հզոր ու առաքինի կերպարը իր ողջ մեծությամբ՝ իր կատարած բազում հոգևոր և աշխարհիկ գործերով, գերելով մեզ իր զարմանահրաշ գործունեությամբ, մի գործունեություն, որն իրագործվեց 1955-ից մինչև 1988 ամբողջատիրական մի պետական կառուցվածքի մեջ, երբ կրոնը ոչ միայն արգելված էր, այլ նաև տրորված, ավերված ու անարգված, և հազիվ բարախում էր Հայ Առաքելական Եկեղեցու զարկերակը:

Ուրեմն, ինչ հզոր հավատ, կամք, իմաստնություն, կորով և համառություն պետք է ունենար Հայոց Հայրապետը՝ հաղթահարելու համար պատ-

ձեշները, նորից կյանքի ու գործունեության կոչելու Հայոց Քրիստոնյա ոգին, սակավ հավատացյալների և սակավ սպասավորների առկայությամբ:

Այս ամենը ոտքի կանգնեցնելու համար ամենից առաջ և ամենից վեր պետք էր ունենալ մարդկային առաքինող մի հմայք, հմայք, որը գործում է խոսքից, իմաստությունից, գործից առաջ, այդ հմայքն ուներ Հայոց Հայրապետը, այն տրված էր ի վերուստ և շռայլորեն. մի՞թե այս չէր, որ հնարավոր դարձրեց իրեն անմիջապես նվիրյալներով շրջապատելն ու հավատ հաղորդելը: Ում դիմում էր Վեհափառը, ում կարիքն ուներ Վեհափառը, մերժում չկար, նույնիսկ կոմունիստական վարչակազմի ընտրյալներն անգամ «ծածուկ» դարձան հարգող և օգնող գործակիցներ, իսկ վտանգավոր պահերին՝ չգիտցող ու չհասկացող ձևացան:

Այսպիսով սկսվեց անժամն, անվերջանալի մի աշխատանք Մայր Աթոռում մինչ այսօր, որն իր բազում ասպարեզներով նախադեպը չունի:

Պետք էր ամենից առաջ վերադարձնել կամ վերակենդանացնել Հայ Եկեղեցու՝ հայ ոգին, հայկական էությունը, որի շուրջը միայն կարող էր զարգանալ, հզորանալ և ծաղկել մեր Քրիստոնյա ժողովուրդը, որն ապրում էր զգուշության, վախի զգացողության մեջ:

Մեկ թերթի էջերը չեն բավականացնի, եթե միայն թվարկենք Վեհափառ Հոր կատարածը, բայց պարտավոր ենք ընդգծել կարևորը:

Վազգեն Առաջինին հաջողվեց ոչ միայն ի մի բերել Հայրենի հողի վրա ցաքուցրիվ Հայ Եկեղեցու հարստությունները, ոչ միայն բարեկարգեց, վերակառուցեց, ետ ստացավ ժամանակին գրավված եկեղեցական մշակութային արժեքները, այլև կարողացավ լավագույնս պահպանելու և պրոպագանդելու միջոցով այն արժանացնել նաև օտարականների ճանաչմանը: Կենդանացավ նաև կապը քույր Եկեղեցիների, եկեղեցապետերի միջև, սկսեց լայնանալ ճանաչումը և հարգանքը Հայ Եկեղեցու և նրա կրոնապետի: Նա իր այցերով գտավ ու կապ հաստատեց Հայ Եկեղեցուն և ազգին նվիրված հայ և այլազգի գործիչների հետ և որ ամենակարևորն էր, Լուսավորչի հավատի Լույսը հասցրեց օտարության մեջ դեգերող, արհեստականորեն հայրենիքից կտրված մեր հայրենակիցներին, և Էջմիածինը դարձավ միակ հուսալի կապը Հայրենիքի հետ միլիոնավոր հայերի համար: Եվ ճիշտ այդ տարիներին իր օգնությամբ հայրենի հող վերադարձվեց բազում-բազմաթիվ գանձեր՝ լինի մատյան, տպագիր գիրք, նկար, ասեղնագործություն, փաստաթուղթ կամ մի այլ մասունք, առանց որի հայ ոգու դեմքը կատարյալ չէր լինի:

Ամենայն Հայոց Հայրապետն իր իմաստուն քաղաքականությամբ օր-օրի ավելացնում էր հայ կրոնական դասի նվիրյալների թիվը, որոնք կատարելագործվում էին աշխարհի կրոնական բարձրագույն ուսումնական հաստատություններում և արդյունքն է այն, որ բազում թեմերի առաջնորդները սաներն են Ս. Էջմիածնի և Վեհափառ Տիրոջ: Այսօր նրանցից շատերը ծնկի եկած Սուրբ Մահճի առջև, իրենց որդիական մեղան են հայցում:

Ավելորդ եմ համարում երկար կանգ առնել նրա խաղաղասիրական գործունեության, ջանքերի վրա, միայն ասենք, որ քաջ գիտակցում էր, որ ապահովելով աշխարհի ժողովուրդների խաղաղությունը, ապահովում էր ամենից առաջ իր տառապյալ ժողովրդի խաղաղությունը:

Ով չգիտե՛, թող տեղյակ դառնա, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տեր Տեր Վազգեն Առաջինը Մայր Աթոռում կատարեց այն, ինչ կատարում էին Հռոմում Կաթոլիկ Եկեղեցու Պապերը մշակույթի ասպարեզում՝ Վերածնունդի

տարիներին: Թվարկման անհրաժեշտություն չկա, արվածը իրեղեն է և շոշափելի:

Վեհափառ Հոր հայրենասիրությունը սահման չուներ: Ընդունված է ասել, որ ոգին ավելի ծանր է, քան մարմինը մարդու, իսկ եթե մեզ հաջողվեր ժողովել, կշռել հայրենասիրությունը Հայրապետի, ես հավատացած եմ, այն հազարապատիկ ծանր կլիներ ոգուց:

Այդ ապացուցվեց նրա ողջ գործունեության ընթացքում և հատկապես շոշափելի դարձավ 1988-ից ի վեր, երբ շնչում, քայլում, գործում էր մի կծիկ դարձած, երևույթների ամեն օրով, ժամով, վայրկյանով պատրաստ էր իր կյանքով պաշտպանելու իր ժողովրդի արդար պայքարն ու պահանջը, կարդացեք նրա կոնդակները, քարոզները, կոչերը, հեռագրերը, նայեցեք նրա՝ ռադիո և հեռուստատեսային ելույթները և կզգաք, թե որքան խորը, իմաստավորված, այդ պահին անհրաժեշտ խոհեր, պատվիրաններ, պահանջներ, նույնիսկ հրամաններ ունի Վեհափառը իր ժողովրդի պայքարի և կենացմահու ճակատագրական ժամերին:

Եվ նրա գործը փառավորվեց փառքով. նա եղավ այն երջանիկ Հայոց Հայրապետը, որի աջով բարձրացավ Էջմիածնի Սուրբ Խաչը օրհնելու համար ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության հոչակումը: Նա ամենից հետո, ամենից խորը տեսավ, հասկացավ և իր իմաստուն միտքն ասաց. «Մենք, այսօրվա հայերս ու կառավարողները, պիտի դառնանք զրկանքների ու զոհողությունների կրողները հանուն ապագա ու ծաղկուն, անկախ Հայաստանի»: Դժբախտաբար, այս իմաստուն խոսքը շատերը չեն հիշում կամ չեն ուզում հասկանալ: Մինչդեռ այն կդառնար մեզ բոլորիս համար միաբանության և տոկունության հզոր աղբյուր:

Վեհափառ Տերը ուներ նաև մի մեծ երազանք, մի հոգեկան չարչարանք, որն այդպես էլ չիրագործվեց, և նա գնաց սրտով ու հոգով խռոված: Դա Հայ Առաքելական Եկեղեցու երկու թևերի միավորման հարցն էր: Այդ թևերը այդպես էլ մնացին միմյանցից հեռու, չնայած նրա թափած բոլոր ջանքերին: Թռիչքը չկայացավ, երբ նույնիսկ նպաստավոր պահն ընձեռվեց մեզ:

Ես, նվաստս, որ ունեցա երջանիկ պատեհություն շուրջ 35 տարի լինելու Վեհափառ Հայրապետի աջակիցը, փորձեցի օգտակար լինել սկզբում որպես Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի անդամ, ապա, 25 տարուց ավելի՝ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ: Նվիրումով ի նպաստ դրեցի հատեստ գիտելիքներս Մայր Աթոռին, սիրեցի ու հարգեցի որդիական սիրով Վեհափառ Հորը և վայելեցի Հայրապետի գնահատանքը և սերը:

Այսօր ծնկի եմ գալիս, խոնարհում գլուխս Մեծ Հայրապետի աճյունի առջև և մեղավորս խնդրում Ամենակարողին, որ նա ներված լինի իր իսկ ընտրյալի հանդեպ՝ հիշեցնելով իր Որդու՝ Քրիստոսի խոսքերը. «Ես չասացի, որ դուք չեք չարչարվի, ես չասացի, որ դուք չեք տանջվի, այլ ես ասացի, որ դուք կհաղթեք»:

Տե՛ր, Վեհափառը հաղթեց,
Տե՛ր, գթա նրան:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՋՅԱՆ